ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 31.07.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ

թիվ ՍՑ-ԷՍ-2018/104

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ) ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 11.07.2018թ. թիվ 03/26-3/12537-18 գրությամբ «Ստանդարտ-2014» ՍՊԸ-ի (ՀՎՀՀ 00887067) և «ՄՍ և ընկերներ» ՍՊԸ-ի (ՀՎՀՀ 02535853) կոնսորցիումին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեց հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի 10.07.2018թ. թիվ 1/18-2/38337-18 գրության հիման վրա, 11.07.2018թ. նախաձեռնել է «Ստանդարտ-2014» ՍՊԸ և «ՄՍ և ընկերներ» ՍՊԸ կոնսորցիումին (այսուհետ՝ նաև Կոնսորցիում) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների

ցուցակում (այսուհետ՝ նաև Ցուցակ) ներառելու ընթացակարգ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

2. <u>ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեն (այսուհետ՝ նաև Պատվիրատու) 10.07.2018թ. թիվ 1/18-2/38337-18 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«ՀՀ պետական եկամուտների կոմիտեն գնումների էլեկտրոնային համակարգի (ARMEPS) միջոցով գնանշման հարցում ընթացակարգով 2018թ. մայիսի 15-ին կազմակերպել է ՀՀ ԿԱ ՊԵԿ-ԳՀԱՊՁԲ-05-18/12 ծածկագրով գնման գործընթացը:

ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 44-րդ կետի համաձայն ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից ներկայացրած տեղեկատվության համաձայն՝ հայտը ներկայացվելու օրվա դրությամբ «ՄՍ ԵՎ ԸՆԿԵՐՆԵՐ» ՍՊԸ-ն (որը ՀՀ ԿԱ ՊԵԿ-ԳՀԱՊՁԲ-05-18/12 ծածկագրով գնման գործընթացին մասնակցել է «Ստանդարտ-2014» ՍՊԸ-ի հետ համատեղ գործունեության պայմանագրի հիման վրա՝ կոնսորցիումով) ունեցել է 19,572 ՀՀ դրամ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորություն, ինչը գերազանցում է նշված կազմակերպությունների հայտով ներկայացրած գնային առաջարկի 1 տոկոսը: ՀՀ պետական եկամուտների կոմիտեի և «Ստանդարտ-2014» ՍՊԸ-ի միջև 2018թ հունիսի 13-ին կնքվել է ՀՀ ԿԱ ՊԵԿ-ԳՀԱՊՁԲ-05-18/12-4 ծածկագրով պետական գնման պայմանագիրը, որը ՀՀ ֆինանսների նախարարության 2018թ. հունիսի 26-ի N 03/26-1/11567-18 գրությամբ չի հաշվառվել և ՀՀ պետական եկամուտների կոմտեի 2018թ. հուլիսի 3-ի N 1/18-2/37082-18 գրությամբ միակողմանի լուծվել է»:

Պատվիրատուն պատշաճ ծանուցվել է Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերի ժամանակացույցի վերաբերյալ, սակայն վերջինիս կողմից լիազորված որևէ ներկայացուցիչ չի ներկայացել:

3. «ՄՍ և ընկերներ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.

«ՄՍ և ընկերներ» ՍՊԸ-ն 23.07.2018թ. Բողոքներ քննող անձին ուղղված գրությամբ հայտնել է հետևյալը.

«Գործի նախապատմությունը և փաստերը.

«ՄՍ և ընկերներ» ՍՊԸ-ն (համատեղ գործունեության պայմանագրի հիման վրա՝ «Ստանդարտ-2014» ՍՊԸ-ի հետ) հայտ է ներկայացրել ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի կողմից հայտարարված «ՀՀ ԿԱ ՊԵԿ-ԳՀԱՊՁԲ-05-18/12» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին (այսուհետ՝ Ընթացակարգ):

«ՀՀ ԿԱ ՊԵԿ-ԳՀԱՊՁԲ-05-18/12» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ գնահատող հանձնաժողով) 24.05.2018թ. ժամը 12:00-ին տեղի ունեցած նիստի թիվ 3 արձանագրության 2.1 կետի համաձայն՝ ներկայացված հայտերի հիման վրա «ՀՀ ԿԱ ՊԵԿ-ԳՀԱՊՁԲ-05-18/12» ծածկագրով գնահատող հանձնաժողովը որոշեց 5 և 6 չափաբաժինների մասով առաջին տեղ զբաղեցնող մասնակից ճանաչել «ՄՍ և ընկերներ» ՍՊԸ-ին (Համատեղությամբ «Ստանդարտ-2014» ՍՊԸ-ի):

Նույն արձանագրության՝

• 2.2 կետի համաձայն՝ հանձնաժողովը որոշեց առաջին տեղ զբաղեցրած մասնակիցներին առաջարկել ներկայացնելու հրավերի 2-րդ մասի հայտ պատրաստելու հրահանգի 3-րդ բաժնով նախատեսված փաստաթղթերը:

• 3.1 կետի համաձայն՝ հիմք ընդունելով «Գնումների գործընթացի կազմակերպման» մասին ՀՀ կառավարության 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետը գնման ընթացակարգին առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև հրավերով նախատեսված՝ ֆինանսական միջոցներ որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ հարցում ներկայացնել ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 31.05.2018թ. ժամը 10:00-ին տեղի ունեցած նիստի թիվ 4 արձանագրության 1 կետի համաձայն՝

- ՀՀ ԿԱ ՊԵԿ-ԳՀԱՊՁԲ-05-18/12 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեից ստացված եզրակացությունը, համաձայն որի մասնակիցների «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշը համապատասխանում է հրավերով սահմանված պահանջներին, և առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացվող փաստաթղթերը, գնահատող հանձնաժողովի նախագահ Լ. Հարությունյանը ներկայացրեց հանձնաժողովի անդամների կողմից իրականացված հայտերի գնահատման արդյունքները, որի հիման վրա հանձնաժողովը որոշեց ՀՀ ԿԱ ՊԵԿ-ԳՀԱՊՁԲ-05-18/12 ծածկագրով գնման ընթացակարգի ընտրված մասնակից ճանաչել՝ 5-րդ և 6-րդ չափաբաժինների մասով, «Ստանդարտ-2014» ՍՊԸ և «ՄՍ և ընկերներ» ՍՊԸ /համատեղությամբ/:

Այնուհետև, գնահատող հանձնաժողովի կողմից սահմանված անգործության ժամկետի ավարտից հետո, այն է՝ 13.06.2018թ., «Ստանդարտ-2014» ՍՊԸ և «ՄՍ և ընկերներ» ՍՊԸ-ն /կոնսորցիում/ և ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի միջև կնքվել է պետության կարիքների համար գրենական պիտույքների և գրասենյակային պարագաների մատակարարման ՀՀ ԿԱ ՊԵԿ-ԳՀԱՊՁԲ-05-18/12-4 ծածկագրով պայմանագիր:

Սակայն «Ստանդարտ-2014» ՍՊԸ-ի և «ՄՍ և ընկերներ» ՍՊԸ-ի հետ /Կոնսորցիում/ պայմանագիր կնքելուց հետո նշված պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության 2018թ. հունիսի 26-ի 03/26-1/11567-18 գրությամբ չի հաշվառվել, և ստացվել է տեղեկատվություն, համաձայն որի, Ընկերությունը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունի ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորություններ 19,572 ՀՀ դրամ:

Այնուհետև՝ ՀՀ ԿԱ ՊԵԿ աշխատակազմի ղեկավարը «Ստանդարտ-2014» ՍՊԸ-ի տնօրեն Ա. Կարապետյանին ուղղված 2018թ. հուլիսի 3-ի N 1/18-2/37082-18 գրությամբ հայտնել է, որ, հաշվի առնելով, որ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի և «Ստանդարտ-2014» ՍՊԸ-ի միջև 2018թ. հունիսի 13-ին կնքված ՀՀ ԿԱ ՊԵԿ-ԳՀԱՊՁԲ-05-18/12-4 ծածկագրով պետական գնման պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության 2018թ.

հունիսի 26-ի 03/26-1/11567-18 գրությամբ չի հաշվառվել և՝ հիմք ընդունելով Պայմանագրի 8.1 կետի երկրորդ պարբերությամբ սահմանված դրույթները՝ ՀՀ պետական եկամուտների կոմիտեն միակողմանի լուծում է ՀՀ ԿԱ ՊԵԿ-ԳՀԱՊՁԲ-05-18/12-4 ծածկագրով գնման պայմանագիրը:

Գործի իրավական հիմքերը և հիմնավորումները.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետը սահմանում է, որ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Այսիսով, նշված օրենսդրական դրույթից ակնհայտ է դառնում, որ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե միաժամանակ առկա են երկու պարտադիր տարր՝

1. Մասնակիցը պետք է թույլ տված լինի գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորության (համապատասխանաբար՝ պայմանագրով նախատեսված պարտավորության) խախտում,

2. Վերոհիշյալ խախտումը պետք է հանգեցրած լինի գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը՝ հայտի մերժմանը (պայմանագրի միակողմանի լուծմանը):

Միևնույն ժամանակ, ՀՀ կառավարության 04.05.2017թ. 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացին կազմակերպման մասին» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 44-րդ կետի համաձայն՝ եթե կոմիտեի կողմից սահմանված ժամկետից ուշ ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ կամ չի բավարարում հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի պահանջները, և պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է:

Եթե անգամ տեսականորեն ընդունենք, որ ժամկետանց հարկային պարտավորություն ունենալը հանդիսանում է գնման գործընթացում ստանձնած պարտավորության խախտում և «ՄՍ և ընկերներ» ՍՊԸ-ն, ունենալով ժամկետանց հարկային պարտավորություն, խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, ապա առկա չէ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված երկրորդ պարտադիր միաժամանակյա պահաջը, այն է, որ վերոհիշյալ խախտումը հանգեցրած լինի գնման գործընթացին «Ստանդարտ-2014» ՍՊԸ-ի և «ՄՍ և ընկերներ» ՍՊԸ-ի հետագա մասնակցության դադարեցմանը, մասնավորապես՝ հայտը մերժելուն:

Ինչպես արդեն նշվել է, Կարգի 44-րդ կետը թույլ է տալիս կոմիտեի կողմից ներկայացված տեղեկատվության պայմաններում մերժել մասնակցի հայտը, եթե պայմանագիրը կնքված չէ:

Մինչդեռ, ինչպես նշել է ՀՀ ԿԱ ՊԵԿ՝ «Ստանդարտ-2014» ՍՊԸ-ի և «ՄՍ և ընկերներ» ՍՊԸ-ի հետ պայմանագիր կնքելուց հետո ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի կողմից ներկայացվել է տեղեկատվություն, համաձայն որի, Ընկերությունը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունի ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորություններ 19,572 ՀՀ դրամ:

Վերոհիշյալը փաստում է, որ «Ստանդարտ-2014» ՍՊԸ-ի և «ՄՍ և ընկերներ» ՍՊԸ-ի հետագա մասնակցությունը Ընթացակարգին չի դադարեցվել՝ այս հիմքով հայտը չի մերժվել (հայտը չի մերժվել, քանզի արդեն կնքված է եղել պայմանագիր), ուստի և, մեր կարծիքով, առկա չէ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված 2-րդ պարտադիր պայմանը:

Վերոհիշյալը վկայում է, որ այս հիմնավորմամբ առկա չէ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքը՝ այն է, գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորության խախտումը, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, ուստի գտնում ենք, որ առկա չէ նաև «Ստանդարտ-2014» ՍՊԸ-ին և «ՄՍ և ընկերներ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներարառելու հիմքը:

Այս տեսանկյունից, մեր կարծիքով, առկա չէ նաև Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված երկրորդ հիմքը, այն է՝ պայմանագրով նախատեսված պարտավորության խախտումը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը, քանի որ այս դեպքում էլ առկա չէ «ՄՍ և ընկերներ» ՍՊԸ-ի կողմից պայմանագրով նախատեսված որևէ պարտավորության խախտում:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Է. Սարգսյանին տեղեկացնում ենք, որ նույն փաստական հանգամանքներում նույն հիմնավորմամբ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Մ. Անանյանը 25.05.2018թ թիվ ՍՑ-ԱՄ-2018/35 կայացրել է որոշում, մասնավորապես արձանագրվել է հետևյալը.

««ՍիՓիէս Օիլ Քորփորեյշն» ՍՊԸ-ի կողմից «ՀՀ ԱՎԾ-ԳՀԱՊՁԲ-2018/5» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում թույլ է տրվել ստանձնած պարտավորության խախտում, քանի որ վերջինս հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունեցել է ժամկետանց հարկային պարտավորություններ, սակայն միաժամանակ արձանագրվում է, որ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետը սահմանում է, որ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորություն, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Վերը նշված հոդվածի վերլուծությունը հստակ ցույց է տալիս, որ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե պարտադիր և միաժամանակյա առկա են երկու հիմքեր՝

1. Մասնակիցը խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորություն,

2. Վերոհիշյալ խախտումը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Միաժամանակ, Կարգի 44-րդ կետով սահմանվում է, որ «....եթե կոմիտեի կողմից սահմանված ժամկետից ուշ ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային

մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ կամ չի բավարարում հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի պահանջները, և պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է:

Այսպիսով, արձանագրվում է, որ առկա չէ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված երկրորդ պարտադիր միաժամանակյա հիմքի առկայությունը, քանի որ 14.03.2018թ. ՀՀ ազգային վիճակագրական ծառայության և «ՍիՓիէս Օիլ Քորփորեյշն» ՍՊԸ-ի միջև կնքվել է թիվ «ՀՀ ՄՎԾ-ԳՀԱՊՁԲ-2018/5-1» բենզինի մատակարարման պայմանագիր, այսինքն՝ վերոհիշյալ խախտումը չի հանգեցրել գնման գործընթացին «ՍիՓիէս Օիլ Քորփորեյշն» ՍՊԸ-ի հետագա մասնակցության դադարեցմանը, քանի որ Կարգի 44-րդ կետը թույլ է տալիս կոմիտեի կողմից սահմանված ժամկետից ուշ ներկայացված տեղեկատվության պայմաններում մերժել մասնակցի հայտը, եթե պայմանագիրը կնքված չէ:

Ուստի նման պայմաններում գտնում եմ, որ «ՍիՓիէս Օիլ Քորփորեյշն» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն»:

Կարգի 45-րդ կետի համաձայն՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր տրամադրում է գնումների բողոքարկման խորհրդին: Նույն կարգի 44-րդ կետով սահմանված՝ մասնակցության իրավունք չունենալու հիմքերի առկայության դեպքում նույն կետով նախատեսված տվյալները չեն ներկայացվում լիազորված մարմին, եթե մասնակիցը կամ կոմիտեն լրացուցիչ տեղեկատվությունը ներկայացրել է մինչև հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստին հաջորդող երրորդ աշխատանքային օրը:

Այսպիսով, ինչպես արդեն նշվել է, «Ստանդարտ-2014» ՍՊԸ-ի և «ՄՍ և ընկերներ» ՍՊԸ-ի հետ /Կոնսորցիում/ պայմանագիր կնքելուց հետո պարզվել է, որ Ընկերությունը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունի ՀՀ պետական բյուջեի նկատմամբ

ժամկետանց հարկային պարտավորություններ 19,572 ՀՀ դրամ, որի արդյունքում ՀՀ պետական եկամուտների կոմիտեն միակողմանի լուծել է «ՀՀ ԿԱ ՊԵԿ-ԳՀԱՊՁԲ-05-18/12-4» ծածկագրով գնման պայմանագիրը:

Նշված փուլում ժամկետանց հարկային պարտավորությունների առկայության հիմքով գնման պայմանագիրը լուծելու արդյունքում «ՄՍ և ընկերներ» ՍՊԸ-ն զրկվել է ՀՀ կառավարության 04.05.2017թ. 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացին կազմակերպման մասին» կարգի Կարգի 45-րդ կետով նախատեսված իրավունքի իրացման հնարավորությունից, քանի որ Կարգի 45-րդ կետը հնարավորություն է ընձեռնում մասնակցին հարկային պարտավորությունների վերաբերյալ լրացուցիչ տեղեկատվությունը ներկայացնել մինչև հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստին հաջորդող երրորդ աշխատանքային օրը, ինչի հիմքով պատվիրատուն մասնակցության իրավունք չունենալու հիմքերի առկայության դեպքում նախատեսված մասնակցի տվյալները չի ներկայացնում լիազորված մարմին:

Մինչդեռ ժամկետանց հարկային պարտավորության առկայության փաստը գնահատող հանձնաժողովի կողմից բարձրացվել է ոչ թե հայտերի գնահատման արդյունքների հաստատման փուլում, այլ մասնակցի հետ պայմանագիրը կնքելուց հետո, ինչն էլ հանգեցրել է «ՄՍ և ընկերներ» ՍՊԸ-ի կողմից Կարգի 45-րդ կետով նախատեսված իրավունքի իրացման զրկմանը:

Ելնելով վերոգրյալից՝ խնդրում ենք հաշվի առնել նշված փաստերը, ՀՀ գնումների հետ կապված բողոքը քննող անձ Մ. Անանյանի կողմից 25.05.2018թ. կայացրած թիվ ՍՑ-ԱՄ-2018/35 որոշման հիմնավորումները, և «ՄՍ և ընկերներ» ՍՊԸ-ին չվերագրել «Գմումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված գնման գործընթացի շրջանակում ստանձնած որևէ պարտավորության խախտում (ինչպես նաև պայմանագրով նախատեսված պարտավորթյան խախտում), և վերջինիս չներառել «Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում»:

Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերին մասնակցում էին Ընկերության լիազորված ներկայացուցիչներ Հասմիկ Ենգոյանը և Արթուր Պարանյանը:

4. «Ստանդարտ-2014» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.

«Ստանդարտ-2014» ՍՊԸ-ն 23.07.2018թ. Բողոքներ քննող անձին ուղղված գրությամբ հայտնել է հետևյալը.

«Տեղեկացնում եմ, որ համաձայն «ՄՍ և ընկերներ» ՍՊԸ-ի և «Ստանդարտ-2014» ՍՊԸ-ի միջև 21.05.2018թ. կնքված համատեղ գործունեության պայմանագրի 1.2.2 կետի՝ «ֆինանսական միջոցներ» որակավորման չափաորոշիչի պատասխանատվությունը դրված է «ՄՍ և ընկերներ» ՍՊԸ-ի վրա:

Իսկ ինչպես հայտնի է, ՍՑ-ԷՍ-2018/104 ընթացակարգի շրջանակներում քննվում է «ՄՍ և ընկերներ» ՍՊԸ-ի (Համատեղությամբ «Ստանդարտ-2014» ՍՊԸ-ի) ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի կողմից հայտարարված «ՀՀ ԿԱ ՊԵԿ-ԳՀԱՊՁԲ-05-18/12» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում ստանձնած պարտավորության խախտում թույլ տալու փաստը:

Ելնելով վերոգրյալից՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ է. Սարգսյանին խնդրում եմ «Ստանդարտ-2014» ՍՊԸ-ին չներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ վիճարկվող ընթացակարգի շրջանակներում «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի մասով որևէ պարտավորություն չստանձնելու, ուստի և չխախտելու հիմքով:

Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերին մասնակցում էին Ընկերության լիազորված ներկայացուցիչներ Հասմիկ Ենգոյանը և Արթուր Պարանյանը:

5. ՍՑ-ԷՍ-2018/104 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

Բողոքներ քննող անձն ուսումնասիրել է ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 11.07.2018թ. թիվ 03/26-3/12537-18 գրությունը և կից փաստաթղթերը, ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի 10.07.2018թ. թիվ 1/18-2/38337-18 գրությունը, «ՀՀ ԿԱ ՊԵԿ-ԳՀԱՊՁԲ-05-18/12» ծածկագրով գնանշման հարցման հրավերը (այսուհետ՝ նաև Հրավեր), «ՀՀ ԿԱ ՊԵԿ-ԳՀԱՊՁԲ-05-18/12» ծածկագրով գնանշման հարցման գնահատող

հանձնաժողովի (այսուհետ՝ նաև Հանձնաժողով) 22.05.2018թ. նիստի թիվ 2, 24.05.2018թ. նիստի թիվ 3, 31.05.2018թ. նիստի թիվ 4 արձանագրությունները, «ՄՍ և ընկերներ» ՍՊԸ-ի 3.07.2018թ. Բողոքներ քննող անձին ուղղված գրությունը, «Ստանդարտ-2014» ՍՊԸ-ի 23.07.2018թ. Բողոքներ քննող անձին ուղղված գրությունը, «ՄՍ և ընկերներ» ՍՊԸ-ի և «Ստանդարտ-2014» ՍՊԸ-ի միջև 21.05.2018թ. կնքված համատեղ գործունեության պայմանագիրը, ՀՀ պետական եկամուտների կոմիտեի և «Ստանդարտ-2014» ՍՊԸ-ի միջև 2018թ հունիսի 13-ին կնքված ՀՀ ԿԱ ՊԵԿ-ԳՀԱՊՁԲ-05-18/12-4 ծածկագրով պետական գնման պայմանագիրը.

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կարիքների համար գրենական պիտույքների և գրասենյակային պարագաներների գնման նպատակով կազմակերպված «ՀՀ ԿԱ ՊԵԿ-ԳՀԱՊՁԲ-05-18/12» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին (այսուհետ՝ նաև Ընթացակարգ) հայտ է ներկայացրել «ՄՍ և ընկերներ» ՍՊԸ և «Ստանդարտ-2014» ՍՊԸ կոնսորցիումը՝ մի շարք չափաբաժինների մասով:

Կոնսորցիումը Ընթացակարգին մասնակցելու նպատակով ներկայացված հայտի N2 հավելվածով՝ ընթացակարգին մասնակցելու նպատակով հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին համապատասխանելու մասին հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ՀՀ ԿԱ ՊԵԿ-ԳՀԱՊՁԲ-05-18/12» ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին:

Հանձնաժողովը 24.05.2018թ. նիստի թիվ 3 արձանագրության 2.1 կետով որոշել է Ընթացակարգի 5-րդ և 6-րդ չափաբաժինների մասով Կոնսորցիումը ճանաչել առաջին տեղ զբաղեցրած մասնակից:

Նույն արձանագրության 3.1 կետով Հանձնաժողովը՝ հիմք ընդունելով «Գնումների գործընթացի կազմակերպման» մասին ՀՀ կառավարության 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետը, որոշել է գնման ընթացակարգին առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև հրավերով նախատեսված՝ ֆինանսական միջոցներ որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության

վերաբերյալ՝ հարցում ներկայացնել ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե (հարցում ներկայացնելու օրը՝ 24.05.2018թ.):

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից 29.05.2018թ. թվագրված եզրակացության համաձայն՝ «ՄՍ և ընկերներ» ՍՊԸ-ն հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով հայտը ներկայացվելու օրվա՝ 21.05.2018թ. դրությամբ, ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ունեցել է իր կողմից ներկայացված գնային առաջարկի մեկ տոկոսը գերազանցող՝ 19,572 ՀՀ դրամի չափով ժամկետանց հարկային պարտավորություն:

Հանձնաժողովն՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեից ստացված եզրակացությունը, համաձայն որի մասնակիցների «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշը համապատասխանում է հրավերով սահմանված պահանջներին, և առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացվող փաստաթղթերը, 31.05.2018թ. նիստի թիվ 4 արձանագրության 1-ին կետի 1.1 ենթակետով որոշել է ՀՀ ԿԱ ՊԵԿ-ԳՀԱՊՁԲ-05-18/12 ծածկագրով գնման ընթացակարգի 5-րդ և 6-րդ չափաբաժինների մասով ընտրված մասնակից ճանաչել «Ստանդարտ-2014» ՍՊԸ-ը և «ՄՍ և ընկերներ» ՍՊԸ-ը կոնսորցիումին:

Նույն արձանագրությամբ Հանձնաժողովը որոշել է հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը:

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի և «Ստանդարտ-2014» ՍՊԸ-ի (որը գործում է «ՄՍ և ընկերներ» ՍՊԸ-ի հետ 21.05.2018թ. համատեղությամբ կնքված պայմանագրի հիման վրա) միջև 13.06.2018թ. կնքվել է ՀՀ ԿԱ ՊԵԿ-ԳՀԱՊՁԲ-05-18/12-4 ծածկագրով պետական գնման պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր):

Պայմանագրի 8.1 կետի երկրորդ պարբերության համաձայն՝ Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

Սակայն, 03.07.2018թ. «Ստանդարտ-2014» ՍՊԸ-ի տնօրեն Ա. Կարապետյանին ուղղված N 1/18-2/37082-18 գրությամբ ՀՀ ԿԱ ՊԵԿ աշխատակազմի ղեկավարը հայտնել է,

որ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի և «Ստանդարտ-2014» ՍՊԸ-ի միջև 13.06.2018թ. կնքված ՀՀ ԿԱ ՊԵԿ-ԳՀԱՊՁԲ-05-18/12-4 ծածկագրով պետական գնման պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության 2018թ. հունիսի 26-ի 03/26-1/11567-18 գրությամբ չի հաշվառվել, և հիմք ընդունելով Պայմանագրի 8.1 կետի երկրորդ պարբերությամբ սահմանված դրույթները՝ ՀՀ պետական եկամուտների կոմիտեն միակողմանի լուծում է ՀՀ ԿԱ ՊԵԿ-ԳՀԱՊՁԲ-05-18/12-4 ծածկագրով գնման պայմանագիրը:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ)՝

- 32-րդ կետի 1-ին ենթակետի «բ» պարբերության համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հայտարարություն՝ հրավերով սահմանված մասնակցության իրավունքի և որակավորման չափանիշներին իր համապատասխանության մասին.
- 32-րդ կետի 20-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու և (կամ) որակավորման չափանիշները բավարարելու մասին հայտով ներկայացված հայտարարությունները որակվում են որպես իրականությանը չհամապատասխանող կամ մասնակիցը կամ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում.
- 33-րդ կետի 8-րդ ենթակետի համաձայն՝ պայմանագրով (նախագծով) սահմանվում է նաև, որ այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, պայմանագրի կողմը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում

գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով պայմանագրի կողմի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է.

• 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտից հետո քարտուղարը էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) հարցում է ներկայացնում առաջին տեղն զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը.

• 44-րդ կետի համաձայն՝ կոմիտեն նույն կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային եղանակով պատվիրատուին տրամադրում է հարցման մասին տեղեկատվություն: Եթե կոմիտեի կողմից սահմանված ժամկետից ուշ ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ կամ չի բավարարում հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի պահանջները, և պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է: Եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրած տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից:

«ՀՀ ԿԱ ՊԵԿ-ԳՀԱՊՁԲ-05-18/12» ծածկագրով գնանշման հարցման հրավերի՝

• 7.2 կետի համաձայն՝ հայտերը գնահատվում են նույն հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում նույն հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

• 7.13 կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ հանձնաժողովի քարտուղարը հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը՝ էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) հարցում է ներկայացնում առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև նույն հրավերի 1-ին մասի 2.5 կետով նախատեսված՝ «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը: Ընդ որում նույն ենթակետում հարցումն ուղարկվում է Ashkhen_Papoyan@taxservice.am էլեկտրոնային փոստի հասցեին նույն հրավերի 8-րդ հավելվածով նախատեսված ձևին համապատասխան՝ էլեկտրոնային նամակի պատճենները միաժամանակ ուղարկելով Lusine_Ghahramanyan@taxservice.am և procurement@minfin.am էլեկտրոնային փոստի հասցեներին.

• 7.15 կետի համաձայն՝ կոմիտեն նույն հրավերի 1-ին մասի 7.13 կետի 3-րդ ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով պատվիրատուին տրամադրում է հարցման մասին նույն հրավերի 9-րդ հավելվածով նախատեսված ձևին համապատասխան տեղեկատվություն: Նույն կետով սահմանված ժամկետում կոմիտեից տեղեկատվության չստացման դեպքում մասնակցի ներկայացրած հայտարարությունները համարվում են իրականությանը համապատասխանող: Եթե կոմիտեի կողմից սահմանված ժամկետից ուշ ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է Օրենքով նախատեսված շեմը գերազանցող

ժամկետանց պարտավորություններ կամ չի բավարարում նույն հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի պահանջներին և պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ մասնակցի հայտը մեժվում է: Եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրված տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից:

• 7.16 կետի համաձայն՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում գրավոր եղանակով տրամադրում է գնումների բողոքարկման խորհրդին: Ընդ որում, եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հայտով ներկայացված հայտարարությունը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող կամ մասնակիցը կամ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Նույն հրավերի 7.15 կետով սահմանված՝ մասնակցության իրավունք չունենալու հիմքերի առկայության դեպքում նույն կետով նախատեսված տվյալները չեն ներկայացվում լիազորված մարմին, եթե մասնակիցը կամ կոմիտեն լրացուցիչ տեղեկատվությունը ներկայացրել է մինչև հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստին հաջորդող երրորդ աշխատանքային օրը:

Նույն կետով նախատեսված լրացուցիչ տեղեկատվությունը ներկայացվում է ինչպես առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից՝ կոմիտեից ստացված գրավոր տեղեկատվությունը գնահատող հանձնաժողովին ներկայացմամբ, այնպես էլ կոմիտեի

կողմից տրված նոր տեղեկատվությամբ: Ընդ որում, գնահատող հանձնաժողովի կամ քարտուղարի կողմից կոմիտեին կրկնակի հարցում չի կատարվում:

Ընթացակարգի քննության նպատակով Բողոքներ քննող անձի մոտ կայացած նիստի ժամանակ «ՄՍ և ընկերներ» ՍՊԸ-ի ներկայացուցիչը պնդեց վերջինիս կողմից 23.07.2018թ. Բողոքներ քննող անձին ուղղված գրությամբ հայտնած դիրքորոշումը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 6-րդ հոդվածի՝

• 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեն իրենց ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը, բայց ոչ ավելի, քան հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ.

• 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

• 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող անձի մոտ՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Օրենքի 30-րդ հոդվածի 6-րդ մասի 3-րդ կետի համաձայն՝ մասնակիցները կարող են գնման գործընթացին մասնակցել համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով): Համատեղ գործունեության կարգով գնումների գործընթացին մասնակցության կարգը սահմանվում է հրավերով: Նման դեպքում մասնակիցները կրում են համատեղ և համապարտ պատասխանատվություն:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ.

- ՀՀ ԿԱ ՊԵԿ կողմից 29.05.2018թ. տրամադրված եզրակացության համաձայն՝ «ՄՍ և ընկերներ» ՍՊԸ-ն հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով հայտը ներկայացվելու օրվա՝ 21.05.2018թ. դրությամբ, ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ունեցել է իր կողմից ներկայացված գնային առաջարկի մեկ տոկոսը գերազանցող՝ 19,572 ՀՀ դրամի չափով ժամկետանց հարկային պարտավորություն:

- Հանձնաժողովը 31.05.2018թ. նիստի թիվ 4 արձանագրության 1-ին կետի 1.1 ենթակետով Ընթացակարգի 5-րդ և 6-րդ չափաբաժինների մասով ընտրված մասնակից է ճանաչել «Ստանդարտ-2014» ՍՊԸ-ը և «ՄՍ և ընկերներ» ՍՊԸ-ը կոնսորցիումը:

- ՀՀ պետական եկամուտների կոմիտեի և «Ստանդարտ-2014» ՍՊԸ-ի (որը գործում է «ՄՍ և ընկերներ» ՍՊԸ-ի հետ 21.05.2018թ. համատեղությամբ կնքված պայմանագրի հիման վրա) միջև 13.06.2018թ. կնքվել է ՀՀ ԿԱ ՊԵԿ-ԳՀԱՊՁԲ-05-18/12-4 ծածկագրով պետական գնման պայմանագիրը:

- Պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության 2018թ. հունիսի 26-ի 03/26-1/11567-18 գրությամբ չի հաշվառվել, և հիմք ընդունելով Պայմանագրի 8.1 կետի երկրորդ պարբերությամբ սահմանված դրույթները՝ ՀՀ պետական եկամուտների կոմիտեն միակողմանի լուծել է Պայմանագիրը:

- Արձանագրված խախտումը՝ Կոնսորցիումի ժամկետանց հարկային պարտավորությունը, Պատվիրատուին հայտնի է եղել մինչև պայմանագրի կնքումը:

Այսպիսով, Բողոքներ քննող անձը գտնում է, որ.

- Կոնսորցիումը՝ Ընթացակարգին մասնակցելու նպատակով ներկայացրած հայտի N 2 հավելվածով՝ ընթացակարգին մասնակցելու նպատակով հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին համապատասխանելու մասին հայտարարությամբ, հայտարարելով և հավաստելով, որ բավարարում է «ՀՀ ԿԱ ՊԵԿ-ԳՀԱՊՁԲ-05-18/12» ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված

մասնակցության իրավունքի պահանջներին, նեկայացրել է իրականությանը չհամապատասխանող տեղեկատվություն, ինչը, Կարգի 32-րդ կետի 20-րդ ենթակետի համաձայն՝ համարվում է գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

- Հանձնաժողովը՝ Կոնսորցիումի հայտը բավարար գնահատելով և վերջինիս Ընթացակարգի ընտրված մասնակից ճանաչելով՝ գործել է ոչ իրավաչափ՝ խախտելով Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասով, Կարգի 44-րդ կետով և Հրավերի 7.15 կետով սահմանված պահանջները:

Միաժամանակ, նկատի ունենալով, որ Հրավերի 7.16 կետի երկրորդ պարբերության համաձայն՝ նույն հրավերի 7.15 կետով սահմանված՝ մասնակցության իրավունք չունենալու հիմքերի առկայության դեպքում մասնակցի տվյալները չեն ներկայացվում լիազորված մարմին, եթե մասնակիցը կամ կոմիտեն լրացուցիչ տեղեկատվությունը ներկայացրել է մինչև հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստին հաջորդող երրորդ աշխատանքային օրը, Բողոքներ քննող անձը գտնում է, որ Պատվիրատուն՝ Կոնսորցիումի հետ պայմանագիր կնքելով, ըստ էության, զրկել է վերջինիս Կարգի 44-րդ կետով նախատեսված լրացուցիչ տեղեկատվությունը Հանձնաժողովին ներկայացնելու հնարավորությունից, որը կարող էր ներկայացվել ինչպես Կոնսորցիումի կողմից՝ կոմիտեից ստացված գրավոր տեղեկատվությունը գնահատող հանձնաժողովին ներկայացմամբ, այնպես էլ կոմիտեի կողմից տրված նոր տեղեկատվությամբ:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Բողոքներ քննող անձը գտնում է, որ «Ստանդարտ-2014» ՍՊԸ և «ՄՍ և ընկերներ» ՍՊԸ կոնսորցիումին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Ինչ վերաբերում է «Ստանդարտ-2014» ՍՊԸ-ի 23.07.2018թ. գրությամբ մատնանշված այն փաստարկին, ըստ որի «ՄՍ և ընկերներ» ՍՊԸ-ի և «Ստանդարտ-2014» ՍՊԸ-ի միջև 21.05.2018թ. կնքված համատեղ գործունեության պայմանագրի 1.2.2 կետով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափորոշիչի պատասխանատվությունը դրված է «ՄՍ և ընկերներ» ՍՊԸ-ի վրա, ինչից «Ստանդարտ-2014» ՍՊԸ-ն եզրակացնում է, որ նախաձեռնված ընթացակարգի շրջանակներում «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի մասով որևէ պարտավորություն չի ստանձնել, հետևաբար, Կոնսորցիումի՝

ժամկետանց հարկային պարտավորություն ունենալու փաստից բխող որևէ պատասխանատվություն չի կրում, ապա Բողոքներ քննող անձը գտնում է, որ այն անհիմն է, քանի որ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով հայտը ներկայացվելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորություն չունենալու պահանջը վերաբերում է Օրենքով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունքին, որը պարտադիր է համատեղ գործունեության պայմանագրի բոլոր կողմերի համար, իսկ «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշը պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող որակավորման չափանիշ է, որը կարող է ստանձնվել Կոնսորցիումի անդամներից որևէ մեկի կողմից՝ վերջիններիս միջև կնքված համատեղ գործունեության պայամանգրի համաձայն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով, 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ գնումների հետ բողոքներ քննող անձը

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 11.07.2018թ. թիվ 03/26-3/12537-18 գրությամբ «Ստանդարտ-2014» ՍՊԸ-ի (ՀՎՀՀ 00887067) և «ՄՍ և ընկերներ» ՍՊԸ-ի (ՀՎՀՀ 02535853) կոնսորցիումին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրվանից:

ՀՀ գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ**